Արձանագրություն 3

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով երեխաների համար նախատեսված հանգստի ճամբարների ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23.04.19թ.
ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մամիկոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Բաղդասարյան /գնահատող/
Մ. Ասլյան /գնահատող/
Ա. Գևորգյան /բացող/
Ա. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին
(Գ. Մամիկոնյան)

1.1 <<Հեքիաթային կիրճ>> մանկական տուրիստական հանգստի կենտրոն ՍՊԸ-ի և <<Արագած Ճամբար>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.3 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Հեքիաթային կիրճ>> մանկական տուրիստական հանգստի կենտրոն ՍՊԸ-ի և <<Արագած Ճամբար>> ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատման արդյունքների մասին
(Գ. Մամիկոնյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3 կետով ընդունված որոշումը 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/ հայտարարել՝ <<Հեքիաթային կիրճ>> մանկական տուրիստական հանգստի կենտրոն ՍՊԸ-ին՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, <<Արագած Ճամբար>> ՍՊԸ-ին՝ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.3 Ընտրված մասնակիցներին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Գոհար Մամիկոնյան /նախագահ/

Արսեն. Բաղդասարյան

Մարգարիտա Ասլյան

Արտավազդ Գևորգյան

Անուշ Գևորգյան

Անուշ Մարգարյան /քարտուղար/